	լուսամուտները պատրաստված են մետաղապլաստե պրոֆիլներով :
Հատակը	Բետոնյա մաքրասվաղ, մանրահատակ, ծածկված լինեոլիումով:
Սանհանգույց+լվացարան	Առկա է ընդհանուր օգտագործման տարածքում:
Կոմունալ հարմարությունները	Էլեկտրամատակարարում: Ընդհանուր օգտագործման տարածքում առկա է՝ ջրամատակարարում, կոյուղի (առկա է սանհանգույց) :
Ներքին հարդարումը, վիճակը	Պատերը և առաստաղը սվաղված է գաջի շաղախով, ներկված ջրաէմուլսիոն խառնուրդից ներկերով: Բավարար վիճակ:





8. Գնահատման մեթոդների նկարագրությունը

1. *Վաճառքների համեմատման մեթոդը* - կիրառվում է գնահատվող անշարժ գույքին նմանատիպ անշարժ գույքի առուվաճառքի գործարքների մասին արժանահավատ շուկայական տեղեկատվության բավարար (առնվազն երեք միավոր) քանակության առկայության դեպքում: Կարող են օգտագործվել նաև ազատ շուկայում հրապարակայնորեն վաճառվող անշարժ գույքի առաջարկի գները:
2. *Գնահատման ծախսային մեթոդը* –այս մեթոդով գնահատման հիմքում ընկած է գնահատման ամսաթվի դրությամբ գնահատվող անշարժ գույքի ճշգրիտ պատճենի կամ նամանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի (ժամանակակից պահանջներին համապատասխանող փոխարինիչի) ստեղծման համար անհրաժեշտ ծախսերի և հողամասի շուկայական գների հաշվարկները :